Աչալուրջ եղե՛ք

Հունիսի 2-4-ը «Երեւան էքսպո» ցուցահանդեսային համալիրում կայացավ երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված «Մանկության աշխարհ էՔՍՊՈ 2012» ցուցահանդեսը, որի ընթացքում «էյ-Ի-Զի Սերվիս» ընկերությունը տեղեկատվական պաստառով մեծահասակներից մինչեւ ամենափոքրիկ այցելուն իրազեկում էր գազից անվտանգ օգտվելու կանոնները: Փոքրիկների համար մատչելի, պատկերավոր նկարներով պաստառում հաջորդաբար ներկայացված էին, թե ինչ պետք է անել գազի հոտ զգալու դեպքում եւ ինչպես պահպանել անվտանգության կանոնները:

Ընկերությունը մշտապես սպառողների շրջանում ձգտում է բարձրացնել գազասպառման կենցաղային համակարգերից անվտանգ օգտվելու կանոնների իմացության մակարդակը՝ այս ուղղությամբ իրականացնելով բազմաթիվ ծրագրեր: Նաեւ այս նպատակով ընկերության կայքէջում՝ www.aegservice.am հասցեով, «Դպրոցականներին՝ գազի մասին» վերնագրով բացվել է հատուկ բաժին, որտեղ երեխաներին հանգամանալից ներկայացված է, թե ինչ է գազը, ինչպես անվտանգ շահագործել այն կենցաղում: Իսկ վերջերս ընկերությունը նախաձեռնեց գազասպառման կենցաղային համակարգերից անվտանգ օգտվելու կանոնների տպագրումը դպրոցական տետրերի վերջին էջում: Առաջիկայում ընկերությունը ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հետ համատեղ նախատեսում է կրթական հաստատություններում դասաժամեր հատկացնել՝ դարձյալ նպատակ ունենալով բարձրացնել գազասպառման կենցաղային համակարգերից անվտանգ օգտվելու կանոնների իմացության մակարդակը: Նմանօրինակ դասաժամեր արդեն իրականացվել են Գյումրիի «Ֆոտոն» վարժարանում:

«էյ-Ի-Զի Սերվիս»-ը հիշեցնում է. մեծահասակնե՛ր, պահպանեք գազից անվտանգ օգտվելու կանոնները, աչալուրջ եղեք գազը շահագործելիս, քանի որ մեր փոքրիկները սովորում են մեզանից: